

ՀԱՅ ԳԻՐՔԸ ՄԵՐ ՀՆԱԳՈՅՆ ՆԱԽԱՀԱՅՐ

ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ

Հայեր եւրոպական ցամաքէն տեղափոխուած թէ Փոքր Ասիական թերակղզիի մէկ կէտի նախարնիկներէն առաջ եկած՝ անկարելի է որ պատմական մօտաւոր ժամանակներու մէջ (2-3000 տարի առաջ) զիտցած չըլլային գիր ըսուած բանի կարեւորութիւնը: Այդ ժամանակները բոլոր միւս հարեւան ազգերը, որոնց հետ Արմէնները յարաբերեր են, զիտէին գիր ըսուած բանը եւ անոր կարեւորութիւնը:

Ի վերջոյ՝ երբ Արմէններ հայկական բարձրաւանդակին տէր մնացին, անկարելի է որ չհետաքրքրուէին այնտեղ՝ դեռ մինչեւ իրենց դալը՝ դոյութիւն ունեցող սեպագիրքերով:

Այսպէս հնագոյն պատմիչները հայերու մասին կը վկայեն, թէ Արեւելքի ամենակարեւոր ազգերէն մէկն էին. ուստի մեր նախահայրերը չէին կրնար անզիտակ մնալ զիր ըսուած բանին:

Այն վարկածը, թէ հայերը, մեր սեփական գրերու զիտէն առաջ, կը գործածէին յունաց եւ պարսից տառերը, կրնայ ճշմարիտ ըլլալ, որքան այդ կը վերաբերի դրսի հետ ունեցած զիպլոմատիք եւ վաճառականական յարաբերութեանց: Իսկ եւ հաւատացած եմ որ իրենք իրենց մէջ ունէին սեփական գիր:

Ղազար Փարպեցի կը վկայէ, թէ թագաւորական զիւանատան պաշտօնական բոլոր գրքութիւնները յոյն եւ ասորի լեզուով, ուստի եւ այդ ազգերու գրով կը կատարուէին:

Մինչեւ մեզ հասած մեհեմադրոջմ եւ մեհեմական տարեգրութիւն ասութիւնները իրաւունք կուտան մեզ խորհելու, թէ Մեսրոպեան գրերու հնճարիւմէն շատ առաջ Հայաստանի մէջ զիտէին եւ կը գործածէին սեփական գիր:

*

Մօտ 2500 տարիներէ ի վեր Ասիան եւ Եւրոպան կը կուրին «Մերձաւոր Արեւելք» անունով յայտնի երկրամասին տիրելու համար: Ընդհարուող երկու կողմերն ալ իրար կը հանդիպին մեր բնաշխարհին մէջ: Այս գրութեան մէջ Հայեր ստիպուած են եղեր գործածել ընդէի քաղաքականութիւն, մանաւանդ այն օ-

րէն, երբ վերջ գտաւ Պարթեւ Արշակունիներու մականին տակ կազմուած համահայկական միութիւնը՝ զինուորապաշտ այդ ազգասոհմի անկումով եւ ստեղծուեցաւ տաղնապալի դրութիւն:

Երբ Հայաստան բաժնուեցաւ երկու ազգեցութեանց զօտիներու եւ եկեղծները ուղեցին խեղդել մեզ իրենց մշակոյթով, հայերը զիտակեցան այն մեծ ուժի զօրութեան, որ են՝ մայրենի լեզուն եւ գիրը: Հինգերորդ դարու սկզբնական տասնամեակներու օրերուն Հայեր՝ «լինել թէ չլինել»ու երկրնարանքի մէջ՝ խելամտեցին որ, պէտք էր այս կապը զօրացունել գիրն ու գրականութիւնը մատչելի դարձնել ամէնուն: Ուստի վերակազմուեցան հայ տառերը: Մէկ դարէ ի վեր մուտ գործող քրիստոնէութիւնն ալ, որ յեղափոխեց մեր երկրի վիճակը հիմնիվեր, խրախուսեց որ հայ գիրը մատչելի դառնայ բոլորին:

Անշուշտ չեմ ընդունիր որ Մեսրոպ հնարած ըլլայ բոլոր հայ գրերը, թէեւ անոր երկրէ երկիր թափառումները եւ այս մասին կատարած ճիշտը զինքը արժանի կը դարձնեն հայոց սուրբը ըլլալու: Դանիէլ Ասորիի մօտ հայ գրերու հէքիաքը եւն. ստոյգ չէ. հայ գիրը կար, բայց մոռացութեան արուած էր: Վրաստանու հ թագաւորի անկախութեամբ Սահակ եւ Մեսրոպ լրացուցին, զանազան պրպրտումներով, մեր պակասաւոր տառերը:

Մեսրոպեան այրուբենէն շատ առաջ հայերը ունէին սեփական տառ: Այդ հին այրուբենը նախաքրիստոնէական մեր հայրերու զիրն էր, որ յետքրիստոնէական շրթի մէջ մոռացութեան էր արուած՝ հայութիւնը նոր լոյսով վերածնցնելու եռանդով գործող նորահաւատներու ջանքերով*):

*) Philostratos «Վարք Ապոլոնեայ Դիանայ» գրուածքին մէջ կը յիշէ, որ Պամփիլիայի մէջ բունուած յովազ մը իր պարանոցին ունէր ոսկիէ մանեակ մը, որուն վրայ հայկական գրերով գրուած էր՝ Արշակ Բագաւոր Աստուծոյն նիւսեայ:

Հ. Ղ. Վ. Ինճիճեան 1788-ին Կ. Պոլսոյ անդլ. դեսպան Այնգլիի հին դրամներու նշանաւոր հաւաքածոյին մէջ տեսած է հարիւրաւոր արծաթ դրամներ, հայերէն վերապատ. «Ի մի կողմն դրոշմեալ ունելով ասրուշան, ի մէջ երկուց մոզուց. իսկ ի միւս կողմն դէմք թագաւորի ըստ արեւելեան օրինակի սաղաւարտեալ, ունելով չուրջանակի հայկական տառս որոշ մնացեալս